

## ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

### ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՁԱՑ ԱԶԱՏ ՏԵՂԱԾԱՐԺԻ ՀԱՍՏԱՔՈՒԹՅՈՒՆ



Եվրոպական համայնքի հիմնադրման մասին 1957 թվականի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 39-րդ հոդվածը նախատեսում է աշխատողների, ինքնազբաղ անձանց՝ Եվրոպական Միության տարածքում ազատ տեղաշարժվելու իրավունքը՝ տալով այդ իրավունքի ընդհանուր նկարագիրը, իրականացման կարգն ու եղանակները, ընդհանուր երաշխիքները, սահմանափակման հնարավորությունները։ Սակայն Պայմանագիրը համանման իրավունքներ է նախատեսում նաև աշխատողների ընտանիքի անդամների համար։ Ընտանիքի անդամների սպառիչ ցանկը սահմանելը միշտ էլ իրենից ներկայացրել է իրավաբանական հիմնախնդիր, քանի որ ընտանիքի անդամների սպառիչ ցանկ սահմանելիս միշտ էլ առաջ են գալիս բազմաթիվ սուրյեկտիվ հատկանիշներ, պրակտիկայում խնդիրներ առաջացնող իրավիճակներ։ Այդ իսկ պատճառով «ընտանիքի անդամ» հասկացության մեկնարանումը, համաձայն ԵՄ օրենսդրության, կարող է օգտակար և արդյունավետ լինել նաև համանման խնդիրը ՀՀ օրենսդրությամբ կարգավորելու տեսանկյունից։

Ընտանիքի անդամների իրավունքները ԵՄ երկրորդային օրենսդրությամբ։

Ազատ տեղաշարժի իրավունքի, ինչպես նաև այդ իրավունքից օգտվող ընտանիքի անդամների հետ կապված հարաբերությունները մանրամասն կարգավորվում են Քաղաքացիների իրավունքների մասին 2004/38/EC դիրեկտիվով (այսուհետ՝ Դիրեկտիվ)։

Դիրեկտիվի նախարանի 5-րդ կետում նշվում է, որ անդամ պետությունների տարածքում ազատորեն տեղաշարժվելու և բնակություն հաստատելու ԵՄ քաղաքացիների իրավունքը, եթե այն իրականացվում է ազատության և արժանապատվության սկզբունքների հիման վրա, երաշխավորվում է

նաև նրանց ընտանիքի անդամների համար՝ անկախ քաղաքացիությունից։ Ընդ որում Դիրեկտիվով տրված «ընտանիքի անդամ» հասկացությունը բավական լայն է և ընդգրկում է անձանց լայն շրջանակ։ Եվ այսպես Դիրեկտիվի 2-րդ հոդվածի 2-րդ մասով «ընտանիքի անդամներ» են։

ա) ամուսինը,

բ) կողակիցը, ում հետ ԵՄ քաղաքացին ունի գրանցված հարաբերություններ՝ տվյալ անդամ պետության օրենսդրության հիման վրա և դրան համապատասխան, եթե այդ օրենսդրությամբ գրանցված հարաբերությունները համահավասար են ամուսնությանը,

գ) ԵՄ քաղաքացու, նրա ամուսնու և (ը) կետի իմաստով կողակցի ուղղակի վայրընթաց հարազատները, որոնք 21 տարեկանից ցածր են և կախվածության մեջ են գտնվում նրանցից,

դ) ԵՄ քաղաքացու, նրա ամուսնու և (ը) կետի իմաստով կողակցի ուղղակի վերընթաց հարազատները, որոնք կախվածության մեջ են գտնվում նրանցից։

Դիրեկտիվի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Դիրեկտիվը կիրառելի է ԵՄ բոլոր այն քաղաքացիների նկատմամբ, որոնք տեղաշարժվում և բնակություն են հաստատում այն անդամ պետությունում, որի քաղաքացին չեն համարվում, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների նկատմամբ, որոնց ցանկը սահմանված է 2-րդ հոդվածի 2-րդ մասով, որոնք ուղղելում կամ հետազոտության միանում են նրանց։

Սակայն Դիրեկտիվը 3-րդ հոդվածի 2-րդ մասով գգալիորեն մեծացրել է Դիրեկտիվի շահառուների շրջանակը՝ նշելով, որ ԵՄ քաղաքացիների ցանկության դեպքում անդամ պետությունները պարտավոր են, համաձայն ազգային օրենսդրության, իրականացնել հետևյալ անձանց մուտքի և

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բնակության իրավունքը.

ա) անկախ քաղաքացիությունից՝ ցանկացած այլ ընտանիքի անդամ, որը չի ընկնում 2-րդ հոդվածի 2-րդ մասի նկարագրության ներքո, այն երկրում, որտեղից նա եկել է, կախվածության մեջ է գտնվել բնակության հիմնական իրավունք ունեցող ԵՄ քաղաքացուց կամ ապրել է նրա հետ նույն ընտանիքում, ինչպես նաև եթե առողջական խնդիրներից ելնելով ԵՄ քաղաքացու կողմից ունի անհրաժեշտ խնամքի կարիք.

բ) կողակիցը, որի հետ ԵՄ քաղաքացին ունի պատշաճ հաստատված ամուր հարաբերություններ:

Անդամ պետությունը պետք է ձեռնարկի անհատական հատկանիշների վերաբերյալ լայնածավալ քննություն, և պարտավոր է պատճառաբանել նշված անձանց մուտքի կամ բնակության իրավունքի ցանկացած մերժում:

Ավելացնենք միայն, որ նախկինում ընտանիքի անդամների հետ կապված հարաբերությունները կարգավորվում էին 1612/68 Կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 10-12-րդ հոդվածներով:

Երկար ժամանակ վեճերի տեղիք էր տալիս այն հարցը, թե երրորդ պետության քաղաքացին, որը հանդիսանում է ԵՄ քաղաքացու ընտանիքի անդամ, իրավունք ունի միանալ իր ընտանիքի անդամ աշխատողին անմիջապես երրորդ երկրից և արդյոք այդ դեպքում ընդունող անդամ պետությունը պարտավոր է ընդունել նրան: Եվրոպական արդարադատության դատարանը (այսուհետ՝ Դատարան) այս հարցին անդրադարձել է *Ակրիխի<sup>1</sup>* գործում: Ակրիխը Մարոկոյի քաղաքացի էր, որը երկու անգամ վտարվել էր Միացյալ Թագավորությունից: Դրանից հետո նա ամուսնանում է քրիստոնացի կնոջ հետ, որը զնում է Իոլանդիա աշխատելու: Հետագայում այդ կինը ցանկանում է վերադառնալ Միացյալ Թագավորություն և իր հետ բերել նաև իր ամուսնու՝ հիմնվելով Կանոնակարգի 10-րդ հոդվածի վրա, սակայն այդ կապակցությամբ Դատարանը նշեց, որ Կանոնակարգը չի կարող օգնել նրանց, քանի որ այն կարգավորում է միայն ԵՄ տարածքում ազատ տեղաշարժի հետ կապված հարաբերությունները: Դատարանը հավելեց նաև, որ ԵՄ քաղաքացու ամուսնու հանդիսացող երրորդ երկրի քաղաքացու կողմից ԵՄ տարածք մուտք գործելու հիմնախնդիրը կարգավորված չէ: Յուրաքանչյուր երկրի օրենսդրությամբ կարգավորվում է

տվյալ երկիր մուտք գործելու կարգը, իսկ ԵՄ օրենսդրությամբ՝ մի անդամ պետությունից մեկ այլ անդամ պետություն տեղափոխվելու հարցը, եթե սկզբնական մուտքը անդամ պետություն արդեն երաշխավորվել է: Հետևաբար Դատարանը վճռեց, որպեսզի օգտվել Կանոնակարգի հոդված 10-ից, ԵՄ քաղաքացու ամուսնու պարտավոր է անդամ պետությունում օրինական բնակության իրավունք ունենա, որ տեղափոխվի այլ անդամ պետություն, որը տեղափոխվել, կամ տեղափոխվում է նրա կինը: Հավելենք միայն, որ ներկայում ԵՄ անդամ պետություն մուտք գործելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են շենքենյան իրավունքով:

Ակրիխում առաջ քաշված կանոնները թույլ չեն տալիս անդամ պետությունում բնակության բույլտվություն չունեցող երրորդ երկրների քաղաքացիներին, օգտվելով ԵՄ օրենսդրությունից, շրջանցել անդամ պետության օրենսդրությունը, որոնց հիմնա վրա նրան կարող են վտարել այդ պետությունից: Սակայն այս կանոնը չի ազդում այն ընտանիքի անդամների վրա, որոնք ցանկանում են անմիջապես երրորդ երկրից մուտք գործել ԵՄ որևէ անդամ պետություն: Նման մեկնարանություն արվել է *MRAAX-ի<sup>2</sup>* գործում, սակայն Ակրիխի գործում դրան հղում չի կատարվել: *MRAAX-ի* գործում Դատարանը այդպես էլ չտարանջատեց ազգային և ԵՄ օրենսդրության դերը ԵՄ տարածք մուտք գործելու թույլտվությունը սահմանելու հարցում: Դատարանը, հիմնվելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի վրա (Ընտանեկան կյանքի իրավունք), ասաց, որ անդամ պետությունը չի կարող հետ ուղարկել երրորդ երկրի այն քաղաքացուն, որը ամուսնացել է ԵՄ քաղաքացու հետ և ցանկանում է մուտք գործել ԵՄ տարածք առանց վավերական նույնականության քարտ կամ անձնագիր կամ անհրաժեշտության դեպքում վիզա ունենալու:

Վերլուծելով վերը նշված գործերը՝ ընդհանուր առմամբ գալիս ենք այն եզրակացության, որ երրորդ երկրների բոլոր քաղաքացիները պետք է անցնեն էմիգրացիոն օրենսդրության միջով, որպեսզի կարողանան մուտք գործել որևէ անդամ պետություն և օգտվեն ԵՄ օրենսդրությունից<sup>3</sup>:

ԵՄ քաղաքացիները և ԵՄ քաղաքացի հանդիսացող նրանց ընտանիքի անդամները այլ ան-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դամ պետությունում երեք ամսից մինչև հինգ տարի ժամանակով բնակվելու համար պետք է ստանան զրանցման վկայական, իսկ ահա ԵՄ քաղաքացիների այն ընտանիքի անդամները, որոնք չեն հանդիսանում որևէ անդամ պետության քաղաքացի այդ նույն ժամանակահատվածի համար պետք է ստանան ընդամենը բնակության քարտ, որն ավելի քիչ իրավունքներ է պարունակում իր մեջ:

Դիրեկտիվի 9-րդ հոդվածը սահմանում է, որ անդամ պետությունները Սիության քաղաքացու ընտանիքի՝ ԵՄ քաղաքացի շահմարվող անդամներին շնորհում են բնակության քարտեր, եթե նրանք ծրագրում են տվյալ պետությունում բնակվել երեք ամսից ավելի: Բնակության քարտ ստանալու համար դիմումների վերջնաժամկետը չի կարող ժամանական օրվանից հաշված երեք ամսից շուտ ժամանակահատվածում լինել: Բնակության քարտի վերաբերյալ պահանջների շրականացման դեպքում անձիք կրում են համապատասխան և ոչ խորական պատիժներ:

Բնակության քարտ ստանում են դիմում ներկայացնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: Դիմում ներկայացնելու վերաբերյալ վկայականը տրվում է անմիջապես (Դիրեկտիվ, հոդված 10-րդ, մաս 1-ին):

Բնակության քարտ ստանալու համար պետք է ներկայացվեն վավերական անձնագիր, ամուսնական կամ բարեկամական կապը հավաստող փաստաթուղթ, համապատասխան ԵՄ քաղաքացու զրանցման վկայական կամ բնակության իրավունքը հավաստող այլ փաստաթուղթ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Դիրեկտիվի 2-րդ հոդվածի 2-րդ մասի (գ) և (դ) կետերում, ինչպես նաև 3-րդ հոդվածի 2-րդ մասի (ա) և (բ) կետերում նշված պայմանների առկայությունը հավաստող ապացույցներ:

Դիրեկտիվի 11-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ բնակության քարտը վավերական է հինգ տարի ժամանակով՝ հաշված տրամադրման օրվանից, կամ ԵՄ քաղաքացու բնակության իրավունքն համահավասար ժամանակահատվածով, եթե այդ ժամանակահատվածը փոքր է հինգ տարուց:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ բնակության քարտի վավերականության վրա ոչ մի ազդեցություն չեն կարող ունենալ հետևյալ հաճախանքները. տարվա մեջ վեց ամիսը չգերազանցող

մշտական բացակայությունները, ավելի երկար ժամանակով բացակայությունը պարտադիր զինվորական ծառայության անցնելու համար, մեկ բացակայությունը առավելագույնը տասներկու անընդմեջ ամսի հարգելի պատճառով, ինչպիսին է հղիությունը, ծննդաբերությունը, լորջ հիվանդությունը, ուսումը կամ վերապատրաստումը, գործուղումը այլ անդամ պետությունում, կամ երրորդ երկրում:

Երկար տարիներ ընտանիքի անդամի իրավունքների հետ կապված ամենավիճելի հարցերից է եղել բնակության քարտի պահպանման հարցը ԵՄ քաղաքացու մահվան, վտարման, ինչպես նաև ամուսնալուծության ամուսնությունն անվավեր ճանաչելու և այլ դեպքերում:

Եվ այսպես՝ Դիրեկտիվի 12-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ԵՄ քաղաքացու վտարումը կամ մահը չեն կարող ազդել նրա ընտանիքի այն անդամների բնակության իրավունքի վրա, որոնք որևէ անդամ պետության քաղաքացի են: Սակայն նրանք մշտական բնակության իրավունք ստանալուց հետո պետք է բավարարեն 7-րդ հոդվածի 1-ին մասի պայմաններին:

7-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ ԵՄ քաղաքացու մահվանը չի կարող հետևել նրա ընտանիքի այն անդամների բնակության իրավունքի կորուստը, որոնք որևէ անդամ պետության քաղաքացի չեն, սակայն որպես ընտանիքի անդամ բնակվել են տվյալ անդամ պետությունում նշանագույնը մեկ տարի ԵՄ քաղաքացու մահվանից առաջ:

Մշտական բնակության իրավունք ստանալուց առաջ այդ անձիք պետք է ապացույնեն 7-րդ հոդվածի 1-ին մասի պայմանների առկայությունը: Նման անձիք հետագայում պահպանում են իրենց բնակության իրավունքը բացառապես իրենց անհատական հատկանիշների հիման վրա:

7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անդամ պետությունից ԵՄ քաղաքացու վտարումը, կամ նրա մահը, չեն կարող հիմք հանդիսանալ նրա երեխաների կամ երեխայի խնամակալ համարվող նրա ծնողների բնակության իրավունքի կորստի համար, անկախ քաղաքացիությունից, եթե երեխաները բնակվում են ընդունող պետությունում և ստանում են կրթություն: Բնակության իրավունքը պահպանվում է մինչև երեխաների կրթության ավարտը:

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Դիրեկտիվի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ամուսնալուծությունը, ամուսնության անվավերություն կամ գրանցված հարաբերությունների ավարտը չեն ազդում ընտանիքի այն անդամների բնակության իրավունքի վրա, որոնք հանդիսանում են այլ անդամ պետության քաղաքացի: Սակայն նրանք ևս մշտական բնակության իրավունք ստանալուց առաջ պետք է բավարարեն 7-րդ հոդվածի 1-ին մասի պայմաններին:

Դիրեկտիվի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ ամուսնալուծությունը, ամուսնության անվավերությունը և գրանցված հարաբերությունների ավարտը հիմք չեն ԵՄ քաղաքացու այն ընտանիքի անդամների բնակության իրավունքի կորստի համար, որոնք որևէ անդամ պետության քաղաքացի չեն, եթե.

ա) նախքան ամուսնալուծությունը, ամուսնության անվավերությունը կամ գրանցված հարաբերությունների ավարտը ամուսնությունը կամ գրանցված հարաբերությունները տևել են նվազագույնը երեք տարի, այդ թվում՝ մեկ տարի ընդունող անդամ պետությունում,

բ) ամուսինների կամ գրանցված հարաբերությունների միջև պայմանագրով կամ դատարանի որոշմամբ ամուսիններից կամ գրանցված հարաբերությունների մասնակիցներից մեկը, որը չի հանդիսանում ԵՄ քաղաքացի, խնամում է ԵՄ քաղաքացու երեխաներին,

գ) որոշակի մասնավոր հանգամանքներից ելնելով, ինչպիսին է տնային բռնությունը ամուսնության կամ գրանցված հարաբերությունների ընթացքում,

դ) ամուսինների կամ գրանցված հարաբերությունների միջև պայմանագրով կամ դատարանի որոշմամբ ամուսիններից կամ գրանցված հարաբերությունների մասնակիցներից մեկը, որը չի հանդիսանում ԵՄ քաղաքացի, ունի անշափահաս երեխային տեսակցելու իրավունք, եթե դատարանը որոշել է, որ տեսակցությունը պետք է լինի ընդունող անդամ պետությունում, և տևի այնքան ժամանակ, որքան սահմանված է պայմանագրով կամ դատարանի որոշմամբ:

Մշտական բնակության իրավունք ստանալուց առաջ այդ անձիք ևս պետք է ապացուցեն 7-րդ հոդվածի 1-ին մասի պայմանների առկայությունը: Նման անձիք հետագայում պահպանում են իրենց բնակության իրավունքը բացառապես իրենց ան-

հատական հատկանիշների հիման վրա:

### Ամուսինը

Դատարանը իր նախադեպային իրավունքում բնորոշել է «ամուսին» հասկացությունը շատ լայն իմաստով: Դիտայի<sup>4</sup> գործում Դատարանը քննարկում էր առանձին ապրող ամուսնացած գույզի խնդիրը: Սենեգալի քաղաքացի կինը ամուսնում է Ֆրանսիայի քաղաքացի տղամարդու հետ, որն ապրում և աշխատում էր Բելգիայում: Հետագայում կինը սկսում է առանձին ապրել իր սեփական միջոցներով և ամուսնալուծվելու նպատակադրությամբ: Բելգիական մարմինները, սակայն, հրաժարում են երկարացնել նրա բնակության իրավունքի թույլտվությունը այն հիմքով, որ նա այլև ԵՄ քաղաքացու ընտանիքի անդամ չէ և չի ապրում իր ամուսնու հետ: Դատարանը նշեց, որ ԵՄ օրենսդրությունը չի պարտադրում ներգաղթած ընտանիքի անդամներին մշտապես միասին ապրել: Դատարանը հավելեց, որ եթե միասին ապրելը լինի բնակության իրավունք ստանալու պարտադիր պահանջ, ապա ցանկացած ժամանակ ԵՄ քաղաքացին, տաճից դուրս հանելով իր ամուսնուն (կնոջը), կարող է նրա նկատմամբ վտարման որոշում կայացնելու պատճառ դառնալ:

Ուստի պարզ է դառնում, որ նոյնիսկ առանձին ապրող գույզերը կարող են մնալ ընդունող պետությունում, ուստի նման կանոնը լիովին համապատասխանում է Հանձնաժողովն ընդդեմ Գերմանիայի գործով Դատարանի առաջ քաշած այն դիրքորոշմանը, որ 1612/68 Կանոնակարգը (Ենթադրում է նաև նրան հետագայում փոխարինած Դիրեկտիվը) պետք է մեկնարանվի Մարդու իրավունքների և իմմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի լույսի ներքո: Սակայն ամուսնալուծված գույզերը չեն կարող նման իրավունքներից օգտվել: Մինչ Դիրեկտիվի ընդունումը ամուսնալուծված գույզերի հարցը կարգավորված չէր, սակայն Դատարանը Դիտայի գործում նշել էր, որ ամուսնական հարաբերությունները չեն կարող դադարեցված համարվել այնքան ժամանակ, քանի դեռ դրանք իրավասու մարմինների կողմից չեն հաստատվել<sup>5</sup>:

«Ամուսին» եզրույթն իր մեջ չի պարունակում միասին բնակվող գույզերին: Ռիդի<sup>6</sup> գործում Դատարանը որոշեց, որ բրիտանացի կինը չի կարող հիմնվել Կանոնակարգի 10-րդ հոդվածի վրա, որ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իրավունք վերապահի իր հետ միասին բնակվող տղամարդուն գալ Նիդեղանդների: Սակայն Ռիդի գործը շատ կարևոր նշանակություն ունեցավ, քանի որ հոլանդական օրենսդրությամբ Նիդերլանդների քաղաքացու հետ կայուն հարաբերություններ ունեցող օտարերկրացին իրավունք ունի բնակություն հաստատել Նիդերլանդներում: Եվ հետևաբար տիկին Ռիդին նման իրավունքից զրկելը կիխտվեր խտրականություն և կիակասեր Պայմանագրի 12-րդ, 39-րդ և Կանոնակարգի 7-րդ հոդվածներին: Հենց Ռիդի գործն էլ հիմք հանդիսացավ, որ Դիրեկտիվում լայնացվեց «ամուսին» եղբույթի շրջանակները, և դրա մեջ ներառվեցին նաև գուանցված հարաբերությունները:

### **Կախվածության մեջ գտնվող անձիք.**

Ինչպես տեսանք, ընտանիքի անդամների ցանկը սահմանելիս՝ Դիրեկտիվը որոշակի արտոնությունները եւ տալիս ընտանիքի աշխատող անդամից կախվածության մեջ գտնվող անձանց: *Lերոնի*<sup>7</sup> գործում՝ Դատարանը նշել է, որ կախվածության մեջ գտնվելու հարցը պետք է որոշվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում: Կախվածության մեջ գտնվող անձը համարվում է աշխատողի կողմից: Դատարանը հավելել է, որ բոլորովին անհրաժեշտություն չկա ընթարկելու այն պատճառները, թե ինչու է կախվածության մեջ գտնվող անձը հովանավորվում աշխատողի կողմից կամ ինչու նա չի հոգում իր կարիքները ինքնուրույն:

### **Ընտանիքի այլ անդամները.**

Ընտանիքի այն անդամները, որոնք չունեն որևէ անդամ պետության քաղաքացիություն, այնուամենայնիվ ունեն ընդունող անդամ պետությունում աշխատելու իրավունք: *Գյուլի*<sup>8</sup> գործում՝ Գերմանիայում վերապատրաստված Կիպրոսի քաղաքացի բժիշկը ամուսնություն է Սիացյալ Թագավորության քաղաքացի վարսավիրի հետ, որն աշխատում էր Գերմանիայում: Այդ բժշկին չտվեցին մշտական գործունեություն ծավալելու վկայական, քանի որ նա ԵՄ քաղաքացի չէր: Դատարանը որոշեց, որ Կանոնակարգի 11-րդ հոդվածը ցանկացած քաղաքացիության պատկանող ամուսնուն իրավունք է տալիս աշխատանք գտնելու:

Ինչպես տեսանք՝ Դիրեկտիվը սահմանում էր նաև երեխաների իրավունքները կրթություն ստանալու ընդունող անդամ պետությունում և նույնիսկ աշխատողի մահվան կամ վտարման դեպքում այդ

իրավունքը չեր դադարում: Դրա նպատակն է խորացնել երեխաների ինտեգրացիան տվյալ անդամ պետության հասարակության մեջ: Ընդ որում, անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ, որ երեխաները կարողանան տարբեր կրթական և ուսումնական ծրագրերից օգտագործել քաղել տվյալ երկրի քաղաքացիներին հավասար պայմաններով<sup>9</sup>: Ընդ որում «հավասար պայմաններ» արտահայտությունը շատ լայն է մեկնաբանվել: Դատարանը Կազարանիկի գործում նշել է, որ «պայմանները» վերաբերվում են այն ընդհանուր միջոցառումներին, որոնք ուղղված են կրթություն ստանալու գործընթացի խթանմանը, այդ թվում՝ դրամաշնորհները ստվորելու ընթացքում բնակարանային և կենցաղային հարցերը հոգալու և վերապատրաստումներ անցնելու համար: Հետևաբար, քննարկվող գործում գերմանական մարմինները չեն կարող մերժել Գերմանիայում աշխատող իտալիայի քաղաքացու դպրոցական աղջկան մեկամսյա դրամաշնորհից՝ հիմք ընդունելով նրա քաղաքացիությունը: Կենսաապահովման դրամաշնորհը գործում է նաև այն դեպքում, երբ երեխաները որոշում են կրթություն ստանալ իրենց հայրենի երկրում: Այդ իսկ պատճառով՝ *Ահ Լեոյի*<sup>10</sup> գործում՝ Դատարանը որոշեց, որ գերմանական իշխանությունները պետք է կենսաապահովման դրամաշնորհ վճարեն իտալացի ներգաղթած այն աշխատողի աղջկան, որը քսանիկնագ տարի աշխատում էր Գերմանիայում, թեկուզ այդ աղջիկը ցանկանում էր բժշկություն ստվորել իր հայրենի պետությունում՝ իտալիայում:

Կրթության իրավունքի կարևորությունն ընդգծվել է *Բառումբաստի*<sup>11</sup> գործում: Գերմանիայի քաղաքացին աշխատում էր Սիացյալ Թագավորությունում, որտեղ նա ամուսնացել էր կոլումբիացի կնոջ հետ: Նրանք ունեին երկու երեխա, և նրանց տրվել էր բնակության իրավունքի թույլտվություն հինգ տարի ժամկետով: Երբ նա դադարեց աշխատել, բրիտանական իշխանությունները հրաժարվեցին երկարացնել նրանց բոլորի բնակության իրավունք տվող փաստաթղթերի ժամկետը և չթույլատրեցին երեխաներին ավարտել իրենց կրթությունը Սիացյալ Թագավորությունում: Դատարանը գտավ, որ բրիտանական իշխանությունների գործողությունները հակասում են Պայմանագրի 39-րդ հոդվածին, քանի որ հնարավորություն չեն տալիս երեխային շարունակելու կրթությունն ընթունող

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

անդամ պետությունում, ինչն էլ կարող է խոչընդոտ հանդիսանալ ԵՄ քաղաքացիների համար 39-րդ հոդվածում ամրագրված ազատ տեղաշարժի իրենց իրավունքն իրականացնելու համար: Սեծամասամբ նույն պատճառով *Ո -ի<sup>12</sup>* գործում Դատարանը որոշեց, որ ԱՄՆ-ի քաղաքացի կնոջ և Սիացյալ Թագավորությունում աշխատող ֆրանսիայի քաղաքացի ամուսնու երեխաներն իրավունք ունեն կրթություն ստանալու Սիացյալ Թագավորությունում, թեկուզ նրանց ծնողները ամուսնալուծվել էին և նրանք բնակվում էին իրենց մոր հետ:

Բացի այդ Բառումքաստի և *Ո -ի* գործում Դատարանը որոշեց, որ եթե ներգաղթած երեխաները կորություն են ստանում ընդունող անդամ պետությունում, ապա նրանց անհրաժեշտ է խնամակալ: Բառումքաստի և *Ո -ի* գործում Դատարանի կատարած եզրահանգումներն իրենց ամրագրումը ստացան Դիրեկտիվի 12-րդ հոդվածի 3-րդ մասում, ինչը

լրացուցիչ երաշխիք հանդիսացավ Պայմանագրի 39-րդ հոդվածի իրականացման համար:

Այսպիսով, վերլուծելով ԵՄ քաղաքացիների ընտանիքի անդամների իրավունքները ԵՄ տարածքում ազատ տեղաշարժվելու հետ կապված հարաբերություններում, զայխ ենք եզրակացության, որ ԵՄ օրենսդրությունը և նախադեպային իրավունքը բավական լայն շրջանակ ընդգրկող անձանց է ընդգրկում «ընտանիքի անդամ» հասկացության ներքո: Ընդ որում, այդ անձանց շրջանակը սահմանելիս հաշվի են առնվել բազմաթիվ օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշներ, որոնց առկայության պարագայում ԵՄ համապատասխան քաղաքացու հետ սերտ հարաբերությունների մեջ գտնվող բոլոր անձինք հնարավորություն են ունենում օգտվելու անձանց ազատ տեղաշարժի իրավունքից:

<sup>1</sup> Տե՛ս Case C-109/01, *Secretary of State for the Home Department v. Akrich*, [2003], պար 48:

<sup>2</sup> Տե՛ս Case C-459/99 [2002] ECR I-6591, պար 61:

<sup>3</sup> Տե՛ս Catherine Barnard, The Substantive Law of the EU: The Four Freedoms, 2003, էջ 285:

<sup>4</sup> Տե՛ս Case 267/83 *Diatta v. Land Berlin* [1985] ECR 567.

<sup>5</sup> Տե՛ս Case 267/83 *Diatta v. Land Berlin* [1985] ECR 567, պար 20:

<sup>6</sup> Տե՛ս Case 59/85 *Reed* [1986] ECR 1283.

<sup>7</sup> Տե՛ս Case 316/85 *Lebon* [1987] ECR 281, պար 22:

<sup>8</sup> Տե՛ս Case 131/85 *Gßl v. Regierungspräsident Düsseldorf* [1986] ECR 1573.

<sup>9</sup> Տե՛ս Case 9-74 *Casagrande v. Landeshauptstadt München* [1974] ECR 773, պար 7, 8:

<sup>10</sup> Տե՛ս Case C-308/89 *Di Leo v. Land Berlin* [1990] ECR I-4185, պար 12:

<sup>11</sup> Տե՛ս Case C-413/99 *Baumbast* [2002] ECR I-7091, պար 50:

<sup>12</sup> Տե՛ս Case C-413/99 [2002] ECR I-7091, պար 60-62, 73: